

ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սերգեյ Մարաբյան

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության

առաջին աստիճանի դատարանի դատավոր,

ԵՊՀ քրեական դատավարության և կրմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ,

իրավաբանական գիտությունների թեկնածու (e-mail: sergeymarabyan@yahoo.com)

Դատական համակարգի կազմակերպական առանձնահատկությունները, մասնավորապես բազմաստիճանությունը և միևնույն օղակի դատարանների մեծաքանակությունը պայմանավորում են քրեական գործերը քննելու համար տվյալ դատական համակարգի դատարանների միջև բաշխելու կարգը սահմանող իրավական նորմերի գոյությունը, որոնց ամբողջությունը կազմում է քրեական գործերի ընդդատության ինստիտուտը¹:

Ընդդատության քրեադատավարական ինստիտուտն ունի սկզբունքային նշանակություն, քանի որ դրա միջոցով լուծվում են ինչպես արդարադատության հանրային-կազմակերպական, այնպես էլ մարդու իրավունքների և օրինական շահերի ապահովման մի շարք խնդիրներ²:

Ավտորիտար, հակաժողովրդավարական վարչաձևերի պայմաններում ընդդատության հարցերը, որպես կանոն, լուծվում են կամայականորեն, քրեական գործերը քննվում են իշխանության հայեցողությամբ ընտրված դատարաններում, որոնցում երաշխավորված չեն դատարանի և դատավորի անկախությունը, անկողմնակալությունը: Իրավիճակն այլ է իրավական և ժողովրդավարական պետություններում, քանի որ դրանցում քրեական գործերի ընդդատությունը այն ինստիտուտներից է, որը՝ որպես անձի արդար դատաքննության անհրաժեշտ և պարտադիր բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է և անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության սկզբունքային երաշխիք: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (63-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ա-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս, Երևան 2010, էջ 272:

² Ընդդատության ինստիտուտի հանրային-կազմակերպական նշանակությունն այն է, որ այն կոչված է նպաստելու քրեական դատավարության արդյունավետ կազմակերպմանը, նախադրյալներ ստեղծելու քրեական գործի արագ, լրիվ և օբյեկտիվ քննության համար: Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս, Երևան 2010, էջ 273:

զատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված):

Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի «Ղատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ (2010)12 Հանձնարարականում (հաստատվել է 2010թ. նոյեմբերի 17-ին) ևս ընդգծվում է, որ դատարանում գործերի բաշխումը պետք է կատարվի օբյեկտիվ, նախապես սահմանված չափանիշի հիման վրա՝ երաշխավորելու համար անկախ և անկողմնակալ դատավոր ունենալու իրավունքը: Այդ գործընթացի նկատմամբ կողմերը կամ գործով չահագրգռված այլ անձինք ներգործություն ունենալ չեն կարող (տե՛ս նշված Հանձնարարականի 24-րդ կետը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք), կենսագործելով պատշաճ ընդդատության հիմնարար իրավական արժեքը, սահմանում է, որ *«Ոչ ոք չի կարող գրկվել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով»* (24-րդ հոդվածի 5-րդ մաս):

Անդրադառնալով քրեական գործերի պատշաճ ընդդատության հարցերին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 2011 թվականի հուլիսի 13-ի ԵԿԴ/0211/01/10 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել: Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար»:

Վերոգրյալի հիման վրա հարց է ծագում, թե ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը արդյոք հստակ և միանշանակորեն կանոնակարգում է պատշաճ ընդդատության որոշման կանոնները, հատկապես երբ խոսքը վերաբերում է քրեական գործերի միացմանը և այդ հիմքով տարածքային ընդդատության որոշմանը:

Կարծում ենք այս հարցերին պետք է միանշանակ բացասական պատասխանել, քանի որ դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քրեական գործերի միացման և տարածքային ընդդատության փոփոխման հետ կապված օրենսդրական ոչ բավարար կանոնակարգումների պատճառով գործնականում առաջանում են կազմակերպական և իրավական մի շարք խնդիրներ, և դրանով իսկ խարխլվում պատշաճ ընդդատության՝ որպես արդար դատաքննության անհրաժեշտ և պարտադիր բաղկացուցիչ հիմնարար իրավական արժեքը:

Սույն հոդվածում նպատակ ունենք քննարկելու դատական քննության փուլում տարբեր դատարաններում գտնվող քրեական գործերը մեկ վարույթում միացնելու նպատակով տարածքային ընդդատությունը փոխելու հարցերը:

Տարածքային ընդդատությունը «քրեադատավարական ընդդատություն» ինս-

տիտուտի տեսակներից է¹: Ըստ Օրենսգրքի 47-րդ հոդվածում ամրագրված տարածքային հատկանիշով քրեական գործի ընդդատության որոշման կանոնի՝ առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում: Քանի որ ամեն մի առաջին ատյանի դատարանի իրավասությունը տարածվում է որոշակի վարչատարածքային միավորի վրա, ապա ընդդատության տարածքային հատկանիշը թույլ է տալիս գործերը բաշխել միևնույն օղակին պատկանող տարբեր դատարանների միջև՝ գործի քննությունը վերապահելով հանցանքի կատարման վայրի դատարանին (հորիզոնական չափանիշ): Այսպիսով, այն հանցագործությունների համար, որոնք կատարվել են միևնույն դատարանի դատական տարածքի սահմաններում, ընդդատության հարցի լուծումը հստակ է. դրանց վերաբերյալ քրեական գործերն ընդդատյա են համապատասխան առաջին ատյանի դատարանին: Նույն հոդվածով օրենսդիրը կանոնակարգել է նաև այն հարցերը, որոնք վերաբերում են տևող, շարունակվող, ինչպես նաև այլ պետության տարածքում կատարված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի ընդդատության հարցերը, որոնց սույն հոդվածի շրջանակում չենք անդրադառնա:

«Քրեական դատավարության օրենսդրությունը, սահմանելով քրեական գործի տարածքային ընդդատության կանոնները, միաժամանակ նախատեսում է **տարածքային ընդդատության փոփոխման հնարավորությունը**»:

Համաձայն Օրենսգրքի 50-րդ հոդվածի՝ «1. Քրեական գործի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս:

2. Ընդդատությունը փոխելու որոշումը համապատասխան դեպքերում ընդունում է գործը քննող դատարանը»:

Այդպիսի որոշման հիմքը քրեական դատավարությանը մասնակցող անձանց մեծ մասի՝ առաջին ատյանի այլ դատարանի դատական տարածքում բնակվելն է: Սակայն օրենքի վերը նշված նորմի բովանդակությունից հետևում է, որ համապատասխան հիմքերի առկայության դեպքում այդ հարցը դատարանը լուծում է ոչ թե իր հայեցողությամբ, այլ մեղադրյալի (մեղադրյալների) համաձայնությամբ, ինչը հասկանալի է, քանի որ պատշաճ դատարանի իրավունքը հենց հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի կոնվենցիոն և սահմանադրական իրավունքն է: Հետևաբար, եթե մեղադրյալը (մեղադրյալները) առարկում է գործի տարածքային ընդդատության փոփոխմանը, անկախ նրանից, որ դատավարության մասնակիցներից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս, գործի ընդդատությունը չի կարող փոխվել: Այսպիսով, Օրենսգրքի 50-րդ հոդվածով ամրագրված նորմը որպես բացառություն տարածքային ընդդատության կանոններից նախատեսում է տարածքային ընդդատության փոփոխման հնարավորություն:

Հարկ է նկատել, որ գործող քրեական դատավարության օրենսգրքում օրենսդիրը տարածքային ընդդատությունը փոխելու ինստիտուտի կողքին սահմանել է նաև քրեական գործերի միացման ինստիտուտը մեկ վարույթում (Օրենսգրքի 28-րդ հոդված) և ընդդատության որոշումը քրեական գործերը միացնելիս (Օրենսգրքի 48-րդ

¹ Ընդդատության տեսակների մասին մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս, Երևան, 2010, էջեր 272-282, Πορτσεβα Օ.Բ. Подсудность уголовных дел. Автореф. канд. дисс., Ижевск 2004, Курс уголовного процесса. Под ред. Л.В.Головки, М., 2016 էջեր 828-837 և այլն:

հողված), որոնց ուսումնասիրությունից, սակայն, պարզ չի դառնում, թե՛

(1) հնարավոր է արդյոք քրեական գործերը միացնել՝ դատարանում տարածքային ընդդատությունը փոխելով, և

(2) ինչ չափանիշներով է որոշվում, թե որ քրեական գործը պետք է միացնել մյուսին:

Այլ կերպ ասած՝ օրենսդիրը թեև նախատեսել է, որ դատարանը կարող է մեկ վարույթում միացնել մի անձի կողմից կատարած մի քանի հանցագործությունների վերաբերյալ գործերը, սակայն չի սահմանել այն, թե այդ կանոնը վերաբերում է արդյոք տարբեր տարածքներում կատարված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի միացմանը, եթե դրանք գտնվում են տարբեր դատարաններում դատական քննության փուլում, և որ դատարանի վարույթում գտնվող քրեական գործը պետք է միացնել մյուսին:

Օրենսգրքի 28-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ և 50-րդ հոդվածների համակարգային մեկնաբանությունից պարզ է դառնում, որ տարբեր դատարանների տարածքներում կատարված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը կարող են միացվել մեկ վարույթում, եթե այդ գործերը գտնվում են մինչդատական վարույթում, որի արդյունքում գործն ուղարկվում է այն դատարան, որի դատական տարածքում ավարտվել է քրեական գործով մինչդատական վարույթը: Քրեական գործերը տարածքային ընդդատությունը փոխելով միացնելու և մեկ վարույթում քննելու այլ հիմք և կարգ օրենսդիրը չի նախատեսել: Այլ կերպ ասած՝ օրենսդրության վերլուծությունից հետևում է, որ եթե նույն դատարանի դատական տարածքում կատարված երկու կամ ավելի հանցագործությունների վերաբերյալ գործերի միացման անհրաժեշտություն առաջանա դատարանում, ապա խնդիր չի առաջանում. նույն դատարանի դատական տարածք է, ինչպես որ խնդիր չի առաջանում, եթե տարբեր տարածքներում կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերը միացվում են նախաքննության փուլում, մինչդեռ եթե տարբեր դատարաններին ընդդատյա գործերը պետք է միացվեն դատական քննության փուլում, երբ գործերը գտնվում են տարբեր դատարաններում, ապա այն խնդրահարույց է, քանի որ օրենքը չի նախատեսում տարածքային ընդդատությունը փոխելու հնարավորություն քրեական գործերը միացնելու հիմքով, որպիսի հանգամանքը, բնականաբար, բացառում է այդ գործերի միացումը մեկ վարույթում:

Մինչ քրեական գործերի միացման հիմքով տարածքային ընդդատությունը փոխելու հիմքի օրենսդրական ամրագրման անհրաժեշտության հարցին անդրադառնալը, կարծում ենք, անհրաժեշտ է նախևառաջ քննարկել քրեական գործերի միացման ինստիտուտի դերն ու նշանակությունը քրեական դատավարությունում:

Քրեական գործերի միացման ինստիտուտի նախատեսումը ինքնանպատակ չէ, այն ունի խիստ կարևոր նշանակություն քրեական դատավարությունում և բացի կազմակերպական հարցերից՝ լուծում է նաև մարդու իրավունքների պաշտպանության խնդիր:

Բանն այն է, որ քրեական գործերի «միացումը և անջատումը»՝ որպես քրեական դատավարության ինքնուրույն ինստիտուտ, կոնկրետ քրեական գործով վարույթի սահմանները (ծավալը) ընդարձակելու կամ նեղացնելու միջոցով փոփոխող իրավատեխնիկական կառուցակարգ է¹: Քրեական գործերի միացման դեպքում

¹ Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս Курс уголовного процесса. Под ред. Л.В.Головко, М., 2016 էջեր 94-98, 659-662:

փոխվում են քրեական դատավարության սահմաններն ընդհանրապես, իսկ դատարանում դատական քննության առարկան և սահմանները՝ մասնավորապես, որի հիմքում ընկած է այն գաղափարը, որ քրեական գործով վարույթն անսահմանափակ չէ և պետք է իրականացվի օրենքով հստակ նախանշած կորդինատների համակարգում: Ընդունված է առանձնացնել երկու հիմնական կորդինատների համակարգ, որոնցում քրեական գործով վարույթը ծագում և ընթանում է քրեական դատավարության փուլերով: Դրանք են՝ (1) քրեական գործի սահմաններն ըստ կատարված արարքների (**in rem**), որը ենթադրում է տարբեր վարույթների կապը կոնկրետ գործի փաստերով կամ հանցագործության դրվագներով, և (2) քրեական գործի սահմաններն ըստ անձանց շրջանակի (**in personam**), որը նշանակում է վարույթի սահմանների սահմանափակում ոչ միայն արարքների շրջանակով, այլև այդ արարքները ենթադրաբար կատարած անձանց շրջանակով:

Քրեական դատավարության սահմաններն ընդգծելու խնդրի լուծումը քրեական գործերի միացման և անջատման ինստիտուտի մի կողմն է, որն ապահովում է *res judicata* (յուրաքանչյուր գործ պետք է լուծվի ուժի մեջ մտած և կայուն դատավճռով) և *non bis in idem* (ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար) քրեադատավարական հիմնարար սկզբունքների իրականացումը կոնկրետ գործով¹:

Դրանից գատ, քննարկվող ինստիտուտը լուծում է նաև այլ կարևոր խնդիրներ, որոնք հանգում են հետևյալին:

Քրեական գործերն առանձին քննելիս առավել խնդրահարույց է ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածով ամրագրված՝ հանցանքի և պատժի համաչափության սկզբունքի ապահովումը, քանի որ վերջինիս գործնական կիրարկումն ապահովելու համար գործող քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված են նույն անձի կողմից մի քանի հանցանք կատարելու դեպքում հանցանքների համակցությանը պատիժ նշանակելու հստակ կանոններ, որոնք, սակայն, քրեական գործերն առանձին քննելու դեպքում հնարավոր չի լինում լիարժեքորեն կենսագործել, և դրանով պայմանավորված՝ անձը միանշանակ ենթարկվելու է անհամաչափ պատժի՝ ինչպես մեղմ, այնպես էլ խիստ լինելու առումով: Օրինակ, եթե անձը կատարել է երկու այնպիսի հանցանք, որոնցից յուրաքանչյուրի համար նախատեսվում է պատիժ մինչև 5 տարի ժամկետով, ապա չի բացառվում, որ դրանցից մեկի համար մի դատարանը նշանակի երկու տարի ժամկետով ազատազրկում, իսկ մյուսի համար՝ երեք կամ ավելի, ընդ որում՝ դրանք հնարավոր չի լինում գումարել և սահմանել միասնական վերջնական պատիժ, մինչդեռ եթե գործերը միացված են լինում, ապա դատարանը կարող է լիարժեք կիրառել համակցության կանոնը և նշանակել պատիժ առանձին-առանձին, այնուհետև գումարելով սահմանել վերջնական պատիժ: Այստեղ խնդիր է առաջանում նաև պատիժները կատարելու հետ կապված, քանի որ չի բացառվում, որ մեկի համար նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառվի, որի կատարումը փաստորեն դառնում է անհնարին:

Բացի այդ, եթե անձը մեղադրվի և դատապարտվի մի դեպքում դիտավորյալ, իսկ մյուս դեպքում՝ անզգույշ հանցագործությունների կատարման համար, ապա խնդիր կառաջանա, թե ինչպես պետք է կատարվեն այս դատական ակտերը, քանի որ անզգույշ հանցագործության դեպքում պատժի կրման ռեժիմն էականորեն տարբերվում է դիտավորյալ հանցագործության համար նշանակված պատիժը կրելու ռեժիմից, ավելին՝ խնդիր է առաջանում նաև վաղաժամկետ ազատման հետ կապված

¹ Տե՛ս նույն տեղում:

և այլ հարցերում: Օրինակ, Մ.Գևորգյանի վերաբերյալ երկու առանձին քրեական գործեր էին քննվել Երևանի Ավան-Նոր Նորք և Էրեբունի ու Նուրաբաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարաններում, և դատարանների կողմից նշանակվել էին առանձին պատիժներ, որոնց կատարումը հանգեցրել էր մի շարք խնդիրների: Նույն խնդիրն էր առաջացել նաև Երևանի Ավան-Նոր Նորք վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում Ս.Մելսակյանի վերաբերյալ գործով և այլն:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դատավորները, պարզելով, որ նույն անձի վերաբերյալ տարբեր դատարաններում առկա են քրեական գործեր, այս խնդիրները չառաջանալու նպատակով փորձում են փոխադարձ պայմանավորվածությամբ այնպես կազմակերպել քրեական գործերի քննությունը, որ մի գործով կայացվի դատավճիռ և մտնի ուժի մեջ, որպեսզի մյուս գործով դատավճիռ կայացնելիս դատարանը կարողանա հանցանքների համակցության կանոնի կիրառմամբ լուծել վերջնական պատժի հարցը:

Սակայն արդարադատության իրականացումը, որը թելադրված է տարածքային ընդդատությունը գործերի միացման հիմքով փոխելու օրենսդրական պահանջի բացակայությամբ, լուծելով արդարացի և համաչափ պատիժ նշանակելու խնդիրը, առաջացնում է մի շարք կազմակերպատեխնիկական և իրավական ոչ պակաս կարևոր այլ խնդիրներ՝ կապված արդարադատության արդյունավետության և անձի իրավունքների երաշխավորման հետ, որոնք բացառելու նպատակով էլ հենց նախատեսված է քրեական գործերի միացման ինստիտուտը:

Այսպես, քրեական գործերի առանձին քննության պատճառով, նախևառաջ բարդություններ են առաջանում նիստերի կազմակերպման և մասնավորապես ամբաստանյալի մասնակցությունը դատական նիստերին ապահովելու հետ կապված: Օրինակ, Ա.Կարապետյանի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի տարբեր դատարաններում առկա են երկու քրեական գործեր, որոնցից մեկը՝ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում (գործ թիվ ԱՐԱԴ1/0038/01/15), իսկ մյուսը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում: Նկատի ունենալով, որ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող քրեական գործով ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց է ընտրված ստորագրություն չհեռանալու մասին, իսկ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում քննվող գործով՝ կալանք, ուստի Արագածոտնի մարզի դատարանում ընթացող դատաքննությանը հնարավոր չէր ապահովել ամբաստանյալի մասնակցությունը: Այդ պատճառով Արագածոտնի մարզի դատարանը միջնորդությամբ դիմել էր Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին, որպեսզի թույլատրվի ամբաստանյալին տեղափոխել ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ դատաքննությանը մասնակցելու համար: Փաստորեն, թեև Ա.Կարապետյանը Արագածոտնի մարզի դատարանում քննվող գործով ամբաստանյալ է, սակայն այլ գործով գտնվում է կալանքի տակ, ուստի Արագածոտնի մարզի դատարանի վարույթում քննվող գործին նրա մասնակցությունը հնարավոր չէ ապահովել առանց համապատասխան դատարանի թույլտվության, ինչը առաջացնում է տեխնիկական մի շարք խնդիրներ:

Բացի այդ, խնդիրներ են առաջանում նաև խափանման միջոցի կիրառման,

փոփոխման, վերացման, հնարավոր փորձաքննությունների (օրինակ՝ դատահոգեբուժական, դատաբժշկական և այլն) նշանակման, դատական նիստերի օրերի, ժամերի և այլ հարցերի հետ կապված, որոնք վտանգում են արդարադատության արդյունավետ իրականացման, դատական գործունեության պատշաճ կազմակերպման և անձի դատական և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի հետ կապված սահմանադրական պահանջների իրականացումը: Այսպիսի խնդիրներ առաջացել են Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող թիվ ԱՐԱԴ1/0034/01/15 քրեական գործով, որով մեղադրվող Ա. Ղազարյանի վերաբերյալ երկու տարբեր գործեր էլ գտնվում են Երևան քաղաքի տարբեր վարչական շրջանների դատարաններում, մասնավորապես՝ Շենգավիթ վարչական շրջանի և Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանների վարույթում, ընդ որում տարբեր ծանրության աստիճանների գործեր, որոնցից մեկով ամբաստանյալը գտնվում է կալանքի տակ, իսկ մյուսով նրա նկատմամբ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, և այդ պայմաններում հնարավոր չէ պատշաճ կազմակերպել և իրականացնել արդարադատություն:

Քրեական գործերն առանձին քննելու դեպքում վտանգվում են քրեական գործերը ողջամիտ ժամկետում քննելու և լուծելու ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով և ՄԻԵԿ 6-րդ հոդվածով ամրագրված սկզբունքը: Ավելին, կախված հանցանքի ծանրության աստիճանից, մինչև մի գործով դատական ակտ կայացնելը, որը կմտնի ուժի մեջ, որպեսզի մյուս դատարանը հնարավորություն ունենա կիրառելու հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու կանոնը, հնարավոր է՝ մյուս գործով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանալ, և անձն ազատվի քրեական պատասխանատվությունից ու պատժից, որպիսի հանգամանքը կհանգեցնի տուժողի իրավունքների և օրինական շահերի խախտման, ինչպես նաև հանցանք կատարած անձին անհիմն քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելուն:

Ողջամիտ ժամկետը և քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը խախտվելու վտանգը ավելի է մեծանում այն դեպքում, երբ առաջին դատավճիռը բողոքարկվում է վերադաս դատարաններում, որի քննությունը, որպես կանոն, տևում է բավականաչափ երկար, իսկ մյուս գործը շարունակում է անշարժ մնալ, մինչև առաջին դատավճիռը մտնի ուժի մեջ:

Բացի այդ, այն դեպքում, երբ դատավճիռներից մեկը մտնում է ուժի մեջ, որպեսզի մյուս դատարանը դատավճիռ կայացնելիս հնարավորություն ունենա հաշվի առնել այլ հանցանքի համար նշանակված պատիժը, ապա առաջանում է այլ խնդիր: Թվում է, թե դատարանը պետք է ղեկավարվի հանցանքների համակցության կանոնով, քանի որ մինչև դատավճիռ կայացնելն է անձը կատարել արարքը, սակայն պատժի հարցը որոշելն է այդ դեպքում դժվարանում: Բանն այն է, որ լինում են դեպքեր, երբ, օրինակ, անձի նկատմամբ երկու դատարաններում իրականացվում է դատաքննություն, որոնցից մեկով անձը գտնվում է կալանքի տակ, իսկ մյուսով՝ ոչ, քանի որ դրա անհրաժեշտությունը բացակայում է, սակայն այն գործով, որով անձը կալանքի տակ չէ, կայացվում է մեղադրական դատավճիռ, որը չի բողոքարկվում և մտնում է օրինական ուժի մեջ, և որով ամբաստանյալի նկատմամբ նշանակվում է պատիժ, իսկ մյուս գործի դատաքննությունը շարունակվում է: Այս դեպքում ստացվում է, որ անձը կրում է պատիժը՝ միաժամանակ մյուս գործով գտնվելով կալանքի տակ: Սակայն գործող քրեական օրենսգրքում պատիժ նշանա-

կելու որևէ կանոն չկա, որը նման իրավիճակների համար լուծում նախատեսած լինի, քանի որ նրանում նախատեսված հանցանքների և դատավճիռների համակցության կանոնները տվյալ դեպքի նկատմամբ կիրառման ենթակա չեն: Այս իրավիճակը առաջացել է Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող թիվ ԱՐԱԴ1/0051/01/15 քրեական գործով: Հարկ է ընդգծել, որ ասվածով չեն սահմանափակվում քրեաիրավական խնդիրները, քանի որ հարցեր են առաջանում նաև դատվածության, ռեցիդիվի, պատժից ազատելու և այլ հարցերի հետ կապված:

Տարբեր դատարաններում նույն անձի վերաբերյալ առանձին գործեր քննելու արդյունքում վտանգվում են նաև քրեական գործի հանգամանքների օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության, դատական գործունեության կազմակերպման, դատավարական տնտեսման, արդարադատության և դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման հետ կապված միջազգային-իրավական և քրեադատավարական սկզբունքները:

Բանն այն է, որ առանձին-առանձին քրեական գործերը քննելու դեպքում հնարավոր չի լինում իրականացնել նույն անձի կողմից կատարված մի քանի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն, որը, լինելով քրեադատավարական հիմնարար սկզբունք, ուղղակիորեն ընկած է քրեական գործերի միացման ինստիտուտի հիմքում¹ և ի թիվս քրեադատավարական այլ նպատակների՝ ապահովում է նաև պատժի արդարացիության սկզբունքի իրականացումը:

Բացի այդ, պետությունը, ի դեմս դատարանների և դատախազության, նյութական, մարդկային և ժամանակային լրացուցիչ ռեսուրսներ է անտեղի ծախսում, ավելին, եթե անձը օգտվում է հանրային պաշտպանի ծառայությունից, ապա պետությունը տվյալ անձին տրամադրում է երկու և ավելի հանրային պաշտպան պայմանավորված քրեական գործերի քանակով:

Եթե անձը գտնվում է կալանքի տակ, ապա լրացուցիչ ռեսուրսներ են ծախսվում նաև դատական նիստերին նրա ներկայությունն ապահովելու համար, որը կատարում է պետությունը ՀՀ ոստիկանության միջոցներով, ինչպես՝ օրինակ թիվ ԱՐԱԴ1/0051/01/15 քրեական գործի դեպքում, քանի որ անձը մասնակցում է ինչպես Երևան քաղաքում իր նկատմամբ իրականացվող դատաքննությանը, այնպես էլ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ Ապարան քաղաքի նստավայրում, կամ Ա.Ղազարյանի վերաբերյալ թիվ ԱՐԱԴ1/0034/01/15 քրեական գործով, քանի որ ամբաստանյալի նկատմամբ Երևան քաղաքի երկու տարբեր դատարաններում (Շենգավիթ և Աջափնյակ ու Ղավթաշեն վարչական շրջանների) և Արագածոտնի մարզի դատարանում քննվում են երեք ինքնուրույն քրեական գործեր:

Հարկ է ընդգծել, որ դատական գործունեության կազմակերպման, արդարադատության և դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը, արագ և ոչ ծախսատար արդարադատությունը միջազգային իրավական պահանջներ են, որոնց իրականացումն ապահովելու նպատակով մի շարք միջազգային իրավական ակտերով պետություններին առաջարկվում է միջոցներ ձեռնարկել քրեական դատավարությունը պարզեցնելու, դատական լուսնները ձգձգելուց խուսափելու և դատական ծախսերը նվազեցնելու, դատավարությունների ժամկետները կրճատելու ուղղությամբ, որպեսզի հնարավոր լինի ապահովել նաև պատժի արդյու-

¹ Այս մասին տե՛ս Курс уголовного процесса /Под ред. Л. В. Головки/, М., 2016, էջ 659-662:

նավետությունը (այս հարցերի մասին տե՛ս ԵԽՆԿ 1987 թ. Սեպտեմբերի 17-ի «Քրեական արդարադատության պարզեցման վերաբերյալ» թիվ R (87) 18 հանձնարարականը, «Արդարադատության արդյունավետության ապահովման հարցերով Եվրոպական հանձնաժողովի հիմնադրման» մասին 2002 թ. սեպտեմբերի 18-ի թիվ (2000)12 բանաձևը և այլն): Մինչդեռ գործող քրեական դատավարության օրենսդրության կանոնակարգումները հնարավորություն չեն տալիս ապահովելու վերոնշյալ պահանջների իրականացումը դատական պրակտիկայում, ավելին՝ հանգեցնում են տրամագծորեն հակառակ արդյունքի՝ դատական նիստերի ձգձգումների, նյութական ծախսերի անտեղի իրականացման և այլն:

Ասվածով պայմանավորված՝ միանշանակ է, որ տարբեր դատարաններում քննվող քրեական գործերի միացումը պետք է պարտադիր լինի, սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ և 50-րդ հոդվածները չեն նախատեսում տարածքային ընդդատությունը նման հիմքով փոխելու հնարավորություն, իսկ տարածքային ընդդատության կանոնի խախտմամբ գործի քննությունը հանգեցնում է դատավճռի անվերապահ բեկանման¹, քանի որ այդ դեպքում խախտվում է ՀՀ Սահմանադրությամբ (63-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (6-րդ հոդված) ամրագրված՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր իրավունքներին առանչվող քրեական գործը քննելու անձի իրավունքը (արդար դատաքննության իրավունք):

Հետևաբար, անհրաժեշտ է օրենսդրորեն հստակ լուծել ինչպես քրեական գործերը միացնելու չափանիշների հարցը, մասնավորապես այն, թե որ քրեական գործը պետք է միացվի մյուս քրեական գործին և ինչ կարգով, այնպես էլ քրեական գործերը միացնելու նպատակով տարածքային ընդդատությունը փոխելու հարցը:

Ի մի բերելով պրակտիկայում տարածում գտած մոտեցումները, կարող ենք եզրակացնել, որ քննարկվող հարցը կարող է լուծվել հետևյալ երկու ճանապարհով:

Նախ՝ այդ հարցով դիմել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին, որպեսզի նա լուծի քրեական գործերի միացման հարցը, որը, մեր կարծիքով, գործող օրենսգրքի կանոնակարգումների պայմաններում անընդունելի է, քանի որ Օրենսգրքի 51-րդ հոդվածից հետևում է, որ այնտեղ խոսքը միայն դատարանների միջև վեճ առաջանալու դեպքում վճռաբեկ դատարանի նախագահի լիազորության մասին է, իսկ քննարկվող դեպքում խոսք չկա վեճի մասին, ուստի վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունը չի տարածվում այդ հարցի լուծման վրա: Այլ հարց է, եթե օրենքով նախատեսվի, որ այդ հարցը ևս պետք է լուծի վճռաբեկ դատարանի նախագահը, սակայն մենք այս մոտեցմանը կողմնակից չենք, քանի որ մեր կարծիքով օրենքով նախատեսված վճռաբեկ դատարանի նախագահի կողմից ընդդատության վեճերի լուծման կառուցակարգն ընդհանրապես խիստ վիճահարույց է:

Բանն այն է, որ օրենսդիրը, նման կանոնակարգում նախատեսելով, նախևառաջ, դատարանների կողմից արդարադատության իրականացումից հրաժարվում և նույն ատյանի դատարանների միջև իրավական վեճի առաջացման հնարավորություն է ընձեռում: Մինչդեռ, թե արդարադատությունից հրաժարումը, թե դատարանների միջև իրավական վեճն անընդունելի են. դրանք հակասում են դատական իշ-

¹ Այս մասին տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի ԵԿԴ/0211/01/10 որոշումը:

խանութան, արդարադատության կազմակերպման և իրականացման հիմնարար սկզբունքներին: Արդարադատություն իրականացնող մարմինը չի կարող վեճի բռնվել մեկ այլ արդարադատություն իրականացնող մարմնի հետ, նրանք չեն կարող ունենալ վեճի առարկա՝ պայմանավորված իրենց գործունեության բնույթով, էությունով, առանձնահատկությամբ և այլն: Այդ վեճը չի կարող առաջանալ նաև այն պատճառով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսդրության առջև դրված է այլ խնդիրների լուծում, այն է՝ քրեաիրավական վեճի լուծումը, իսկ հակառակ մոտեցումը, որը դրված է գործող օրենսդրության հիմքում, հանգեցնում է մի վիճակի, որ դատարանները իրենց սահմանադրական գործառույթներն իրականացնելու փոխարեն վեճի մեջ են մտնում միմյանց հետ՝ վտանգելով անձի դատական պաշտպանության իրավունքը, դատական իշխանության հեղինակությունը և այլն: Մեզ համար առավել վիճահարույց է օրենսդրի մոտեցումը՝ դատարանների միջև առաջացող վեճը լուծել «վարչարարական» մեխանիզմով, քանի որ այդ «պայմանական վեճը» կրում է դատավարական բնույթ, ուստի պետք է լուծվի հենց դատավարական կառուցակարգերով, այլ ոչ թե դատարանակազմական, իսկ վճռաբեկ դատարանի նախագահը, «վարչարարական» գործառույթներից զատ, այլ գործառույթներ չպետք է իրականացնի:

Այս վերջին դատողություններ հիմքում ընկած է այն հանգամանքը, որ ընդդատության խախտումը հանդիսանում է դատական ակտը անվերապահ բեկանելու հիմք, որը նախատեսված է Օրենսգրքի 398-րդ հոդվածով և մեկնաբանված ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2011 թվականի հուլիսի 13-ի ԵԿԴ/0211/01/10 որոշմամբ: Հետևաբար, քանի որ ընդդատության խախտման հանգամանքը հանդիսանում է դատավճռի անվերապահ բեկանման հիմք, ուստի ընդդատության մասին վեճի լուծումն էլ պետք է իրականացվի բացառապես վերադաս դատարանների կողմից՝ արդարադատություն իրականացնելու գործառույթի շրջանակներում: Քանի որ գործող օրենսգրքի կանոնակարգումների պայմաններում օրենսդիրը հնարավոր է համարում ընդդատության մասին վեճի լուծումը վարչարարական մեխանիզմով, ուրեմն անհրաժեշտ է դատավճռի բեկանման հիմքերից բացառել ընդդատությունը խախտելու հիմքով առաջին աստիճանի դատարանի դատավճիռը բեկանելու հիմքը, իսկ եթե այս հիմքը պահպանվում է, ապա պետք է բացառել ընդդատության մասին վեճի լուծումը վարչարարական մեխանիզմով: Դրանք չեն կարող միաժամանակ գոյություն ունենալ: Մեր մոտեցումը պայմանավորված է նաև նրանով, որ ըստ ԱԳՀ երկրների համար մոդելային քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ և 81-րդ հոդվածների, որը, ի դեպ, ընկած է ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի հիմքում, ընդդատության վերաբերյալ վեճերը բացառապես լուծվում են վերաքննիչ կամ գերագույն դատարանի կողմից: Այս մոտեցման իրավաչափությունը և ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի կանոնակարգման հակաիրավական լինելը պայմանավորված են այն հանգամանքով, որ օրենքում նախատեսված չէ որևէ կառուցակարգ այն առումով, թե անձը իրավունք ունի վիճարկելու ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի ընդդատության մասին վեճի լուծման որոշումը, եթե համաձայն չլինի դրա հետ: Չէ՞ որ օրենքի հիման վրա ստեղծված, անկախ, անկողմնակալ և պատշաճ դատարանի իրավունքը պատկանում է հենց անձին, ուստի դրանով պայմանավորված նա իրավունք ունի ընդդատությունը խախտված լինելու հիմքով բողոքարկելու դատավճիռը, որը նաև կարող է բեկանվել, եթե բողոքը հիմնավոր է, մինչդեռ վճռաբեկ դատարանի նախագահի որոշումը ենթակա չէ վիճարկման և բնականաբար փոփոխման, որն իր հերթին առաջացնում է այլ իրավա-

կան խնդիրներ՝ կապված արդարադատության մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության միջոց ունենալու իրավունքի, դատարանի անկախության, անկողմնակալության սկզբունքի հետ և այլն:

Հարկ է նկատել, որ ԱՊՀ որոշ երկրներում (օրինակ՝ ՌԴ) ընդհանրապես բացակայում է ընդդատության մասին վեճեր հասկացությունը, ինչը տրամաբանական է, քանի որ, ինչպես նշվեց, դրա խախտումը հանդիսանում է դատավճիռը բեկանելու հիմք: Եթե ընդունում ենք, որ ընդդատության մասին վեճը կարող է լուծվել վճռաբեկ դատարանի նախագահի կողմից այն դեպքում, երբ ընդդատությունը խախտելը նաև դատավճիռի բեկանման հիմք է, ապա նույն կերպ անհրաժեշտ է նախատեսել կառուցակարգ, օրինակ՝ նյութական իրավունքի մեկնաբանման հարցով դիմել այլ մարմնի կամ վճռաբեկ դատարանի նախագահին մինչև դատավճիռ կայացնելը և այլն:

Ինչևէ, կարծում ենք՝ քննարկվող մոտեցումը իրավաչափ չէ:

Երկրորդ մոտեցումը այն է, որ տվյալ դեպքում կարելի է կիրառել Օրենսգրքի 50-րդ հոդվածի կանոնը և մեղադրյալի կարծիքը լսելով՝ լուծել քրեական գործի ընդդատությունը փոխելու հարցը, որը նույնպես, մեր կարծիքով, անընդունելի է, քանի որ այդ դեպքում օրենքով սահմանված է պարտադիր պայման. «Եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս», որը բնականաբար տարբեր տարածքներում կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերի դեպքում հնարավոր չէ ապահովել: Թեև օրենքի հիման վրա ստեղծված, պատշաճ դատարանի իրավունքը հիմնականում պատկանում է հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձին, ինչը նշանակում է, որ եթե նա չի առարկում, որպեսզի իր վերաբերյալ տարբեր դատարաններում քննվող գործերը միացվեն մեկ վարույթում, ապա գործերը պետք է միացվեն, սակայն խնդիրը միայն դա չէ: Ինչպես նշվեց վերևում, քրեական գործերի միացումը ունի սկզբունքային նշանակություն և լուծում է կազմակերպական և իրավական կարևոր խնդիրներ, ուստի եթե մեղադրյալը համաձայնություն չտա, ապա քրեական գործերը չեն կարող միացվել, ինչի հետևանքների մասին արդեն նշվեց վերևում: Հետևաբար կարծում ենք, որ մեղադրյալի համաձայնության կանոնը չպետք է տարածել քրեական գործերի միացման վրա:

Փաստորեն, միակ ելքը օրենքում հստակ չափանիշներ մշակելն է, որը ենթադրում է՝ ինչպես քրեական գործերը միացնելու նպատակով տարածքային ընդդատության փոխելու հիմքի, այնպես էլ քրեական գործերի միացման չափանիշների սահմանում, օրինակ՝ առավել վաղ դատարան ուղարկած գործին է միացվում առավել ուշ դատարան մուտք եղած քրեական գործը (այսպես է կանոնակարգում նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 269-րդ հոդվածի 2-րդ մասը), կամ նվազ ծանր հանցագործության վերաբերյալ գործը միացվում է առավել ծանր հանցագործության վերաբերյալ գործին, կամ հաշվի է առնվում այն, թե որ քրեական գործով են անցնում առավել շատ վկաներ, տուժողներ և այլն:

НЕКОТОРЫЕ СООБРАЖЕНИЯ ОТНОСИТЕЛЬНО ИЗМЕНЕНИЯ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ПОДСУДНОСТИ УГОЛОВНЫХ ДЕЛ

Сергей Марабян

*Судья суда первой инстанции общей юрисдикции марза Арагацотн,
Ассистент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ,
кандидат юридических наук (e-mail: sergeymarabyan@yahoo.com)*

В статье обсуждается ряд проблемных вопросов, которые, в частности, связаны с изменением территориальной подсудности уголовных дел при их соединении. Автор статьи на основе анализа действующего законодательства приходит к выводу, что несмотря на то, что УПК РА предусматривает возможность соединения уголовных дел, находящихся в суде, однако не урегулированы такие вопросы, как возможность изменения территориальной подсудности при соединении уголовных дел, находящихся в суде, и критерии соединения одного уголовного дела с другим.

Автор считает, что хотя законодатель предусмотрел возможность соединения в одно производство уголовные дела о преступлениях, совершенных одним и тем же лицом, но не определил: относится ли это правило к уголовным делам о преступлениях, совершенных в разных местах, если они рассматриваются в разных судах, и какое дело должно быть соединено с другим.

Представляя организационно-правовые вопросы, возникающие в судебной практике при рассмотрении в разных судах уголовных дел о преступлениях, совершенных одним и тем же лицом, автор приходит к выводу, что соединение уголовных дел, как правило, обязательно, но закон не позволяет изменять территориальную подсудность на этом основании и поэтому предлагает предусмотреть такую возможность. Автор выражает свое несогласие с предложениями о том, что в условия действующего УПК данный вопрос может быть решен путем обращения к Председателю Кассационного Суда РА, так как, данный институт сам по себе является чрезвычайно противоречивым. Кроме того, эта конструкция относится к разрешению конфликтов между судами, которые в этом случае отсутствуют. Автор также выражает свое несогласие с таким решением, как разрешение данной проблемы на основе согласия обвиняемого, так как с точки зрения действующего УПК в данном случае необходимо другое условие, которое не может быть обеспечено. На основании вышеизложенного автор приходит к выводу, что единственный выход из данной ситуации это разработка в законе конкретных критериев, что предполагает определение основания изменения территориальной подсудности при соединении уголовных дел, а так же критерий соединения уголовных дел, например, с делом, которое раньше направлено в суд соединяется дело направленное позже, или дело о мене тяжком преступлении соединяется с делом о более тяжком преступлении, или учитывается количество свидетелей, потерпевших и других лиц, вовлеченных в уголовное дело.

SOME CONSIDERATIONS REGARDING THE ISSUE OF CHANGING TERRITORIAL JURISDICTION IN CRIMINAL PROCEDURE

Sergey Marabyan

*Judge at the first instance court of general jurisdiction of Marz Aragatsotn,
Assistant at the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics,
PhD in Law (e-mail: sergeymarabyan@yahoo.com)*

The article reveals certain issues arising in the judicial practice regarding changing territorial jurisdiction in case of connection of the cases. Based on the analyze of current legislative regulations the author has come to the conclusion that though the legislator has provided the opportunity to connect the cases within the same court proceedings it has not regulated the issues whether it is possible to connect the cases within the same court proceedings by changing territorial jurisdiction and which is the criteria to decide which case should be connected to another one.

In other words the author notes that though the legislator has provided the opportunity to connect within the same court proceedings cases regarding different crimes committed by the same person it has not firstly defined whether this rule concerns cases regarding the crimes committed in the different places if they are under judicial proceedings in the different court and secondly which case should be connected to another one.

Presenting the organizational and legal issues arising in the judicial practice in the result of examination of criminal cases regarding the same person in different courts author has come to the conclusion that connection of criminal cases is mandatory, as a rule. But the law does not allow to change territorial jurisdiction on such a ground. So it is suggested to provide such an opportunity. Author expresses his objection to the proposals that in terms of current CCP the issue can be resolved by referring to the Chairman of Cassation Court. Author notes that such an institute itself is very controversial and should be excluded. Besides, author notes that such a regulation concerns the solution of the conflicts arising between the courts which are absent in this case. Author also expresses his disagreement to the proposal of solution of this issue by hearing the opinion of the accused because in terms of current CCP another condition is to be provided which is impossible in this case. Thus, author has come to the conclusion that the possible solution is stipulation of certain criteria which supposed definition of the ground of changing territorial jurisdiction while connecting criminal cases and of criteria to connect cases, e.g., the case recently sent to the court could be connected to the case sent earlier, or criminal case regarding less serious offences could be connected to the cases regarding more severe crimes or the number of witnesses, victims and other participants involved in criminal case should be taken into consideration.

Բանալի բառեր – քրեական գործերի միացում, տարածքային ընդհատություն, քրեական գործերի սահմաններ, դատարան, մինչդատական վարույթ, քրեական գործերի անջատում, տարածքային ընդհատության փոփոխություն

Ключевые слова – Объединение уголовных дел, выделение уголовного дела, территориальная подсудность, пределы уголовного дела, суд, досудебная производства, изменение территориальной подсудности

Keywords – Association of criminal cases, territorial jurisdiction, limits of criminal cases, court, pre-trial proceedings, dissociation of criminal cases, a change of the territorial jurisdiction